«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ք.Երևան **29.08.2018թ.**

2018թ. Օգոստոսի 29-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի 2018-2019 ուստարվա անդրանիկ նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները՝ Ի.Վարդանյան (նախագահ), Լ.Հարությունյան (քարտուղար), անդամներ՝ Մ.Նանյան, Թ.Համբարձումյան, Ա.Գյոզալյան, Ն.Սահակյան և հրավիրված ուսանող՝ Լ.Յարիջանյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը, որն քվեարկությամբ միաձայն հաստատվեց:

1. 2018-2019 ուստարվա Տնօրինական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման մասին:

   (Զեկուցող, Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյան):
2. 2018-2019 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստման և կազմակերպման մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյան):
3. 2018-2019 ուստարվա հաստիքացուցակի քննարկում և հաստատում:

   (Զեկուցող, Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):
4. 2018-2019 ուստարվա ուսումնական պլանների հաստատում:

   (Զեկուցող, ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյան):
5. 2018-2019 ուստարվա ամբիոնների դասաբաշխման և ծավալի հաստատում:

   (Զեկուցող, ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյան):
6. Ընթացիկ հարցեր՝ Հանձնաժողովների և խորհուրդների կազմերի վերանայման մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյան):

Մինչ օրակարգային հարցերին անցնելը, ելույթ ունեցավ տնօրեն Ի.Վարդանյանը:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Ի.Վարդանյանը տեղեկացրեց, որ 2018-2019 ուստարվա սեպտեմբերից Քոլեջի վարչական անձնակազմում տեղի է ունենալու փոփոխություն՝ Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պաշտոնում Թ.Համբարձումյանի փոխարեն նշանակվելու է Ն.Եգորյանը:

1. **Լսեցին՝** Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանի ելույթը 2018-2019 ուստարվա Տնօրինական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ 2018-2019 ուստարվա Տնօրինական խորհրդի առաջին նիստով պետք է քննարկել և հաստատել խորհրդի կազմը և տարեկան աշխատանքային պլանը:

Նա նշեց նաև, որ հաշվի առնելով քոլեջում իրականացվող բարեփոխումները և որակի ապահովման գործընթացները, անհրաժեշտ է խորհրդի կազմում ընդգրկել ուսանողական խորհրդի կազմից բարձր առաջադիմությամբ սովորող մեկ ուսանող, որից հետո ներկայացրեց Խորհրդի նոր կազմը:

Նախագահ՝ Ի.Վարդանյանը առաջարկեց Խորհրդի նոր կազմի հաստատման հարցը դնել բաց քվեարկության:

Խորհրդի անդամները միաձայն կողմ քվեարկեցին Խորհրդի նոր կազմին՝

Նախագահ՝ Ի.Վարդանյան, Քոլեջի տնօրեն,

Քարտուղար՝ Լ.Հարությունյան, ուսումնական մասի քարտուղար,

Անդամներ՝ Ն.Եգորյան, ուսումնական գծով տնօրենի տեղակալ,

Մ.Նանյան, դասախոս,

Ա.Գյոզալյան, կադրերի բաժնի վարիչ,

Ն.Սահակյան, կարիերայի ստորաբաժանման ղեկավար,

Լ.Յարիջանյան, «Դեղագործություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանը, ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանը և դասախոս՝ Մ.Նանյանը:

Իրենց ելույթներում նշեցին, որ Լիլիթ Յարիջանյանը ընկերասեր, հումանիստ, պատասխանատու, պարտաճանաչ և բանիմաց ուսանող է: Նա ունի ուսանողներին իր շուրջ համախմբելու և ուսանողի խոսքը տնօրինությանը հասցնելու կարողություն: Այդ իսկ պատճառով չառարկեցին ուսանող՝ Լ.Յարիջանյանի թեկնածությանը:

Լ.հարությունյանը խորհրդին ներկայացրեց նաև 2018-2019 ուստարվա Տնօրինական խորհրդի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը: Նա նշեց, քանի որ, պլանի նախագիծը նախապես ներկայացվել է խորհրդի անդամներին, ապա խնդրեց անհրաժեշտության դեպքում արտահայտվել, առաջարկություններ կամ դիտարկումներ ներկայացնելու համար (պլանի նախագիծը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Տնօրինական խորհրդի նոր կազմը:

2. Հաստատել Տնօրինական խորհրդի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը:

2. Լսեցին՝ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյանի ելույթը՝ 2018-2019 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստման և կազմակերպման վերաբերյալ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյանը իր ելույթում նշեց, որ Քոլեջը ամբողջովին պատրաստ է 2018-2019 ուսումնական տարվա մեկնարկին: Ուսումնական մասի կողմից իրականցվել են նախատեսված համալիր միջոցառումներ, մասնավորապես՝

- Ուսումական տարվա համար ձեռք են բերվել անհրժեշտ քանակությամբ գրենական պիտույքներ և տրամադրվել ամբիոններին:
- Առաջին կուրս ընդունող ամբիոնների համար ձեռք են բերվել անհրաժեշտ քանակի ուսումնական դասամատյաններ, ուսանողական գրքույքները և տոմսերը:
- Վերանայվել և կազմվել են բոլոր ուսումնական պլանները, մասնավորապես՝ հիմնական ընդհանուր կրթության ծրագրերում, քանի որ հանրակրթության ծրագրերում եղան ժամերի փոփոխություններ՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից:
- Վերանայվել են հանրակրթության բոլոր ծրագերը՝ թվով 15 առարկայի:
- Վերանյվել է դասախոսական կազմը:
- Կազմվել են 2018-2019 ուստարվա ըստ կուրսերի դասացուցակները:
- Կազմվել են հիմնական ընդհանուր կրթությամբ առաջին կուրսի և մասնագիտական կուրսերի խմբերը:
- Նշանակվել են դասղեկներ:
- Կարգի են բերվել ուսումնական լսարանները և լաբորատոր կաբինետները:
- Անհրաժեշտ նյութերով, սարքերով համալրվել են լաբորատոր և կլինիկական կաբինետները:
- Ուսումնական գործընթացի անխափան աշատանքների համար ամբիոներին են տրամադրվել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:
- Ձմռանն ընդառաջ ձեռք են բերվել անհրաժետ քանակի էլեկտրական տաքացուցիչեր:
- Բարելավվել են ուսումնամեթոդական պաշարները:
- Վերանայվել է Քոլեջի ներքին կանոնները և տրամադրվել բոլոր ամբիոններին:
- Դասախոսական կազմի որակի բարձրացման նպատակով մշակվել է դասալսումների կազմակերպման և գնահատման նոր կարգի նախագիծը (նախագիծը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանը իր ելութում ավելացրեց, որ այս պահին Քոլեջը ամբողջովին պատրաստ է նոր ոսումնական տարվա մեկնարկին:

Քոլեջի տնօրեն՝ Ի.Վարդանյանը ամփոփելով ընթացիկ հարցը, հավելեց, որ հաշվի

առնելով Քոլեջի կազմակերպաիրավական կարգավիճակը, որևէ խնդիր առաջանալու, խիստ անհրաժեշտության դեպքում, տնօրինությունը անհապաղ քայլեր կձեռնարկվի խնդիրը լուծելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատրված նախապատրաստական աշխատանքները նախնական գնհատել բավրար:
2. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյանին ուսումնական տարվա ավարտին ներկայացնել կատարողական զեկույց, ըստ կատարված գործողությունների:

3. **Լսեցին.** Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանի ելույթը 2018-2019 ուստարվա հաստիքացուցակի քննարկման և հաստատման վերաբերյալ:

Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանը նախ ոջունեց և շնորհավորեց խորհրդի բոլոր անդամներին նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, որից հետո հակիրճ ներկայացրեց 2018-2019 ուստարվա հաստիքացուցակի նախագիծը, քանի որ այն նախապես արդեն քննարկվել էր: Նա նշեց, որ հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ ԿԳ նախարարարության կողմից ներկայացված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակին: Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը ավելացրեց նաև, որ ի տարբերություն պետական քոլեջների, «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ղեկավարությունը, անհրաժեշտության դեպքում կարող է հաստիքացուցակում կատարել փոփոխություններ (հաստիքացուցակի նախագիծը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 2018-2019 ուստարվա հաստիքացուցակը:
2. Հանձնարարել կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանին նոր հաստատված հաստիքացուցակի մասին տեղեկացնել անձնակազմին:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանի ելույթը 2018-2019 ուստարվա ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնկան պլանների նախագծերի, հաստատման վերաբերյալ: Իր ելույթում նա նշեց, որ ուսումնական պլանների նախագծերը կազմվել են 2018-2019 ուստարվա նախապատրաստական աշխատաքների ընթացքում (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյանը և դասախոս՝ Մ.Նանյանը իրենց ելույթում նշեցին, որ ուսումական պլանների նախագծերը լիովին համապատասխանում են պետական կրթական չափորոշիչի բոլոր պահանջներին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 2018-2019 ուստարվա ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը:
2. Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանին հանձարարել հաստատված ուսումնական պլանները տրամադրել մասնագիտական ամբիոններին:

5. **Լսեցին.** Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանի ելույթը 2018-2019 ուստարվա ամբիոնների դասաբաշխման և ծավալի հաստատման վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում նշեց, որ դասաբաշխումը կատարվել է ըստ ուսումնական պլանի և ուսումնական խմբերի: Ընդհանուր առմամբ ամբիոններին հատկացված բեռնավածությունը համեմատած նախորդ տարվա, էականորեն չի փոխվել: Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը առաջարկեց անհրաժշտության դեպքում քննարկել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը առաջարկեց հաստատել, քանի որ այն կազմվել և քննարկել է քոլեջի Մանավարժական խորհրդում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 2018-2019 ուստարվա ամբիոնների դասաբաշխումը և ծավալը:
2. Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանին հանձարարել հաստատված դասաբաշխման և ծավալի թերթիկները տրամադրել ամբիոններին և իրականացնել վերահսկողություն:

6. **Լսեցին.** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյանի ելույթը քոլեջում հանձնաժողովների և խորհուրդների կազմերի վերանայման վերաբերյալ:

Թ.Համբարձումյանը ներկայացրեց, որ քոլեջում գործող հանձնաժողովների և խորհուրդների կազմերը անհրաժեշտ է վերանայել: Հաշվի առնելով որակի ապահովման մշակույթի ձևավորման աշխատանքները և ուսանողներին քոլեջի կառավարման և որոշումների կայացման գործընթացում ներառելու նպատակով առաջարկեց գործող հանձնաժողովներում և խորհուրդներում ընդգրկել առնվազն մեկ ուսանող:

Նա մասնավորապես առաջարկեց մանկավարժական խորհրդի կազմում ևս ընդգրկել մեկ ուսանող (խորհուրդների կազմի ցուցակները կցվում են):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել մանկավարժական խորհրդի կազմը:
2. Հաստատել դասղեկական խորհրդի կազմը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ք.Երևան **11.10.2018թ.**

2018թ. հոկտեմբերի 11-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին՝ Ի.Վարդանյանը (նախագահ), Լ.Հարությունյանը (քարտուղար), անդամներ՝ Մ.Նանյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը և Լ.Յարիջանյանը (ուսանող):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը, որից հետո դրվեց քվեարկության, որն էլ միաձայն ընդունվեց:

1. Վարչական անձնակազմի փոփոխության մասին:
(Զեկուցող, խորհրդի նախագահ, տնօրեն՝ Ի.Վարդանյան):
2. Ուսումնական մասի 2017-2018 ուստարվա կատարված աշխատանքների հաշվետվության ներկայացում:
(Զեկուցող, Ուսումնական մասի քարուղր՝ Լ.Հարությունյան):
3. Քոլեջի գործունեության տարեկան հաշվետվության ներկայացում:
(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
4. Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի մասին:
(Զեկուցող, Ուսումնական մասի քարուղր՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Տնօրինական խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանի ելույթը վարչական կազմում փոփոխման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Ի.Վարդանյանը տեղեկացրեց, որ 2018-2019 ուստարվա սեպտեմբերից Քոլեջի վարչական անձնակազմում տեղի է ունեցել փոփոխություններ և առաջարկներ նոր փոփոխությունների վերաբերյալ, որից հետո հանձնարարեց կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանին ներկայացնել կատարված փոփոխությունը և առաջարկները:

Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանը ներկայացրեց վարչական կազմի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն.

- Աննա Ռուդիկի Գևորգյանը նշանակվել է «Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչի պարտականությունները կատարող:

Առաջարկեց նաև հետևյալ փոփոխությունները.

- Քոլեջի լաբորանտ՝ Լինա Պռազյանին ազատել զբաղեցրաց պաշտոնից և նշանակել ուսումնական մասի քարտուղար, համատեղությամբ կատարել արխիվավարի և գրադարանավարի պարտականությունները:
- Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանին ազատել քարտուղարի պաշտոնից և նշանակել ուսումնական մասի վարիչ, համատեղությամբ կատարել նաև որակի ապահովման պատասխանատուի պարտականությունները:
- Դասախոս՝ Վլադիմիր Բադասյանին համատեղությամբ կատարել նաև քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի պարտականությունները:

Ներկայացված առաջարկությունները կիրառել 2018թ. դեկեմբերի 1-ից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել վարչական կազմի վերաբերյալ փոփոխությունների առաջարկությունները:
2. Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանին հանձնարարել կազմել նախատեսված նեքին նորմատիվ ակտերը (հրամանները) և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2. **Լսեցին՝** Լ.Հարությունյանի ելույթը՝ Ուսումնական մասի 2017-2018 ուստարվա կատարված աշխատանքների կատարողականի վերաբերյալ:

Ուսումնական մասի քարտուղր Լ. Հարությունյանը իր ելույթում նշեց, որ Քոլեջի ուսումնական մասը պլանով նախատեսված բոլոր աշխատանքները և միջոցառումները կատարել է ամբողջովին: Ուսումնական մասի կողմից իրականցվել են նախատեսված համալիր միջոցառումները: Ելույթում հակիրճ ներկայացրեց այն աշխատանքները, որոնք կրում են շարունակական և պարբերական բնույթ, մասնավորապես՝

- Ուսումնական պլանների վերանայում և կազմում, համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից ներկայացվող պահանջերի:
- Վերանայվել են հանրակրթության բոլոր ծրագերը, ըստ առարկաների:
- Դասախոսական կազմի վերանայումը:
- Ուսումնկան լսարաների և լաբորատոր կաբինետների արդիականացումը:
- Լաբորատոր և կլինիկական կաբինետների սարքերով և անհրաժեշտ նյութերով համալրման աշխատանքները:
- Ուսումնամեթոդական ռեսուրսերի բարելավման աշխատաքները:
- Դասախոսական կազմի որակի բարձրացման աշխատանքների կազմակերպում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Դասախոս՝ Մ.Նանյանը իր ելույթում նշեց, որ հաշվետու ուստարվա ուսումնական մասի

աշխատանքներին անձամբ մասնակցություն չունենալով, այնուամենայնիվ կատարողականը իրոք տպավորիչ է, աշխատանքների ամբողջ ընթացքը եղել է Քոլեջի տնօրենի անմիջական հսկողության ներքո:

Քոլեջի տնօրեն՝ Ի.Վարդանյանը ամփոփելով ընթացիկ հարցը, հավելեց, որ հաշվի առնելով Քոլեջի սուղ ֆինանսական միջոցները, այնուհանդերձ ուսումնական գործընթացում անթույլատրելի է թերացումները, անհրաժեշտության դեպքում անհապաղ քայլեր կձեռնարկվի խնդիրը լուծելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է):
2. Ուսումնական մասի քարտուղար Լ.Հարությունյանին հանձնարարել հաջորդ ուստարվա կատարողականը ներկայացնել բարելավման առաջարկություններով:

3. **Լսեցին.** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը Քոլեջի գործունեության տարեկան հաշվետվության ներկայացման վերաբերյալ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանը իր ելույթում ներկայացրեց Քոլեջի գործունեության 2017-2018 ուստարվա հաշվետվությունը ամփոփ տեսքով: Նա նշեց, որ ինքը անձամբ, միայն հավաքագրել է տեղեկատվությունը և վերլուծել: Քոլեջի գործունեության ամբողջական հաշվետվության կազմման աշխատանքներին մասնակցել են բոլոր ստորաբաժանումների ղեկավարները և պատասխանատուները, այդ իսկ պատճառով հաշվետվությունը ներկայացվեց հակիրճ և ամփոփ, ներկայացվեց նաև այն կետերը, որոնք իրականացվել են մասնակի և առաջարկությունների տեսքով: Ամփոփելով ելույթը, Ն.Եգորյանը ավելացրեց նաև, որ ի տարբերություն այս տարվա կատարողականի, հաջորդ տարի կներկայացվի նոր ձևաչափի կատարողական և **SWOT վերլուծություն**:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2017-2018 ուստարվա գործունեության կատարողականը գնահատել բավարար:
2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին մշակել և ստորաբաժանումների քննարկմանը ներկայացնել գործունեության վերաբերյալ տարեկան կատարողականի նոր ձևաչափ:
3. 2019-2020 ուստարվանից կիրառել գործունեության պլանավորման և կատարողականների նոր ձևաչափ:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանի իր ելույթում նշեց, որ քոլեջում ակտիվ իրականացվում է որակի ապահովման գործընթացներ, մասնավորապես՝

- Կազմակերպվել են հանդիպումներ և խորհրդտվություններ ՈԱԱԿ հիմնադրամի

մասնագետների կողմից:

- Ուսումնասիրվում են նմանատիպ տարբեր քոլեջների կառավարման և որակի ապահովման համակարգերը:
- Ուսումնասիրվում են նմանատիպ տարբեր քոլեջներում իրականացվող որակի ապահովմանն ուղղված աշխատանքները:
- Ուսումնասիրվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանը և Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանը իրենց ելույթում նշեցին, որ անհրաժեշտ է ձևավորել հատուկ աշխատանքային խումբ, ով կհամակարգի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի մշակման աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձարարել Ուսումնական մասի քարտուղար (ՈԱ պատասխանատու)՝ Լ.Հարությունյանին իրականացնել գործող ՌՀԾ-ի վերլուծություն և հաջորդ խորհրդի նիստին ներկայացնել հստակ առաջարկներ:
3. Հանձարարել Ուսումնական մասի քարտուղար (ՈԱ պատասխանատու)՝ Լ.Հարությունյանին մշակել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների պլան-ժամանակացույց:
4. Ուսումնական մասի քարտուղար (ՈԱ պատասխանատու)՝ Լ.Հարությունյանին. Տնօրինական խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել Քոլեջի կառավարման համակարգի արդիականացման առաջարկներ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **16.01.2019թ.**

2019թ. հունվարի 16-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Բացի նախագահ՝ Ի.Վարդանյանից (նա գտնվում էր հերթական արձակուրդում), նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները. քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Մ.Նանյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը և Լ.Յարիջանյանը (ուսանող), նիստը նախագահում էր տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահող Ն.Եգորյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի միջանկյալ ատեստավորման արդյունքների և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:
   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
2. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի ժամանակացույցի ներկայացման մասին:
   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման կառուցվածքի վերանայման առաջակության մասին:
   (Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):
4. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025 թվակնների զարգացման ռազմավարական ծրագրի վերանայման մասին:
   (Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի միջանկյալ ատեստավորման արդյունքների և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատնքնրի ընթացքի վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, նա տեղեկացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների և միջանկյալ ատեստավորման արդյունքների մասին: Առաջին կիսամյակում վերանայվել են միջանկյալ ատեստավորման քննական հարցաշարերն ու քննատոմսերը: Նշանակվել են քնություններ ընդհանուր և հատուկ մասնագիտկան մոդուլներից և առարկաներից: Անցկացվել են միջմոդուլային և միջառարկայական համալիր քննություններ: Քննությունները վերահսկվել են, կայացել են ըստ վարման կարգի, ուսանողների կողմից գիտելիքների ստուգման և գնահտման վերաբերյալ բողոքարկումներ չեն արձանագրվել:

Ինչ վերաբերվում է 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի և ընթացիկ վիճակի վերաբերյալ, նշեց, որ արդեն պատրաստ է դասացուցակը և ժամանակացույցը: Պլանավորված է սույն թվականի հունվարի 23-25-ը անցկանել ամբիոնի նիստեր, որտեղ դասախոսները հաստատման կներկայացնեն իրենց թեմատիկ պլանները, ուսումնական մասի վարիչը կպատրաստի 2-րդ կիսամյակի դասամատյանները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատնքները գնահատել բավարար:
2. Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին հանձնարարել տնօրնինական խորհրդի հաջորդ նիստին ներկյացնել ամփոփ հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի ժամանակացույցի ներկայացման վերաբերյալ:

Ն.Եգորյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի ժամանակացույցի նախագիծը: Ըստ նախագծի, ուսումնական գործընթացը սկսվելու է 2019 թվականի հունվարի 29-ից, ավելացնելով 7-8 և 9-10 դասաժամերը, այն հնարավորություն կնձեռի լրացնելու բաց թողնված դասերը: Ժամանակացույցը նախապես ներկայացվել է ամբիոններին, նրանց հետ հանդիպման ընթացքում առարկություններ չեն արձանագրվել: Որից հետո առաջարկեց քննարկել և հաստատել ներկայացված նախագիծը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Լ.Հարությունյանը իր ելույթում նշեց, որ այդ նախագիծը ներկա իրավիճակում լիովին

հնարավոր է կազմակերպել, և բոլոր բաց թողնված դասաժամերը ըստ ժամանակացույցի կարելի է արդյունավետ լրացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի աշխատանքների ժամանակացույցի նախագիծը:
2. Հանրակրթության դասերը սկսել 29.01.2019 թվականից, կազմակերպելով լրացուցիչ դասընթացներ:

3. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման կառուցվածքի վերանայման առաջարկության վերաբերյալ:

Լ.Հարությունյանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման կառուցվածքի վերանայման առաջարկության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը բժշկական և հումանիտար կրթության միջին մասնագիտական կրթօջախ լինելով և իրականացնելով արդիական ուսումնական գործընթացներ, այնուամենայնիվ ժամանակի հրամայականն է վերանայել Քոլեջի գործող կառավարման գծային կառուցվածքը:

Հաշվի առնելով նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումները և մարտահրավերները, քոլեջի ՌԶԾ-ի նպատակները և խնդիրները, 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված ուսումնասիրությունները, մասնավորապես Հայաստանում գործող պետական և ոչ պետական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական (քոլեջների) կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կառուցվածքը և կառավարման համակարգը, առաջարկեց վերանայել և արդիականացնել Քոլեջի կառավարման համակարգը:

Որպես հիմնավորում ներկայացրեց իր կողմից իրականացված ուսումնական հաստատությունների կառավարման կառուցվածքային համակարգի համեմատական վերլուծությունը (ՈԱ պատասխանատուի զեկուցագիրը և կառավարման կառուցվածքի նախագիծը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ.Նանյանը իր ելույթում նշեց, որ իրոք, բարձրացված խնդիրը շատ տեղին և արդիական է: ՈԱ պատասխանատուի կողմից իրականացված ուսումնասիրությունը շատ օգտակար է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք պատրաստվում ենք մոտ ապագայում հայտ ներկայացնել ՈԱԱԿ հիմնադրամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար, գտնում եմ, որ իրոք անհրաժեշտ է վերանայել գործող կառավարման համակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման գծային կառուցվածքի ներկայացված նախագիծը երաշխավորել և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատմանը:

4. **Լսեցին** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի վերանայման վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր հանգամանալից, բովանդակային և փաստարկային ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025թթ. Զարգացման ռազմավարական գործող ծրագրի բաց կողմերը: Ներկայացված փաստարկների հիման վրա, մասնավորապես՝ բացակայում են կոնկրետ քայլերը, գործողությունները և գնահատման արդյունանար ցուցիչները: Բացի այդ, առաջադրված խնդիրներին ներկայացված ժամկետները ոչ իրատեսական են և ենթակա են ճշտման, և այլն: Վերանայելով գործող ՌԶԾ-ը, համապատասխանեցնելով գործող պահանջներին, հնարավորություն կընձեռի քոլեջին հստակ, նպատակային քայլերով և արդյունավետ գործողություններով հասնել քոլեջի տեսլականին:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը հավելեց, որ Քոլեջի կառուցվածքային փոփոխությունները պահանջում է նաև վերանայել գործող ՌԶԾ-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել տնօրինական խորհրդի անդամներին եռամսյա ժամկետում մշակել և տնօրինական խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել նոր ՌԶԾ-ի նախագիծը, հստակ սահմանված նպատակներով, համապատասխան գործողություններով և վերջնարդյունքներով:

Նախագահ՝ Ի.Վարդանյան/Ն.Եգորյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **18.03.2019թ.**

2019թ. մարտի 18-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ ընդլայնված նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Մ.Նանյանը, Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը, Լ.Յարիջանյանը (ուսանող), հրավիրված էին՝ հաշվապահ՝ Ա.Սարգսյանը, ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Պռազյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի մասին:

(Զեկուցող, Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

2. Քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, նախորդ տարվա բյուջեի կատարողականի և ընթացիկ տարվա նախահաշվի կազմման մասին:

(Զեկուցող, Հաշվապահ՝ Ա.Սարգսյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի նախագծի ընթացքի մասին:

(Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանի ելույթը Քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի վերաբերյալ:

Ա.Գյոզալյանը ողջունելով Խորհրդի անդամներին ներկայացրեց Քոլեջում գործող ներքին նորմատիվ իրավական ակտերը: Նա նշեց, որ ներքին նորմատիվ իրավական ակտերի մեծ մասը հիմնականում ընդհանուր են, այսինքն ՀՀ ԿԳ նախարարության կողմից մշակված և հաստատված են, որոնք մենք ուղղակի տեղայնացրել ենք: Սակայն հաշվի առնելով կրթության բարեփոխումները, մարտահրավերները և ապագայում քոլեջի

ինստիտուցիոնալ հավատարմագման գործընթացի մեկնարկը, առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ, փաստաթղթերի մշտադիտարկման նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ ուսումնական գործնթացը կարգավորող ներքին իրավանորմատիվային փաստաթղթերը իրոք վերանայման կարիք ունեն: Ամփոփելով ելույթը, առաջարկեց աշխատանքային խմբի ղեկավար նշանակել ՈԱ պատասխանատու՝ Լ.Հարությունյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ստեղծել Քոլեջում գործող ներքին նորմատիվ իրավական ակտերի վերանայման և նորերի մշակման աշխաանքային խումբ, հետևյալ կազմով՝ ՈԱ պատասխանատու՝ Լիլիթ Հարությունյան (խմբի ղեկավար), անդամեր՝ Լինա Պռազյան, Անահիտ Գյոզալյան, Աննա Գրիգորյան և Լլիլիթ Յարիջանյան (ուսանող):
2. Աշխատանքային խմբի ղեկավար՝ Լ.Հարությունյանին հանձնարարել հաջորդ նիստում ներկայացնել կատարողական զեկույց առաջարկություններով:
3. Տնօրինական խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել նոր մշակված փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ քննարկումների և առաջարկությունների հիման վրա նախագծերի վերջնական տարբերակները:

2. **Լսեցին՝** Հաշվապահ՝ Ա.Սարգսյանի ելույթը Քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, նախորդ տարվա բյուջեի կատարողականի և ընթացիկ տարվա նախահաշվի կազմման վերաբերյալ:

Ա.Սարգսյանը ներկայացրեց 2018թ. բյուջեի կատարողականը և նշեց, որ բյուջեով նախատեսված բոլոր ծախսերը կատարված են (հիմք՝ 2018թ. կատարողական): Հաջորդիվ, Ա.Սարգսյանը ներկայացրեց 2019 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը (2019 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը կցվում է):

Ամփոփելով ելույթը, Ա.Սարգսյանը նշեց, որ 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի գանձման ընթացքը և արդյունքները այդքան էլ գոհացուցիչ չեն, նույնիսկ կան ուսանողներ, որոնք դեռ նախորդ տարվանից ունեն ուսման վարձի պարտքեր: Այս հանգամանքը շատ մտահոգիչ է, քանի որ Քոլեջի բյուջեի համալրումը ամբողջովին կապված է ուսման վարձերի հավաքագրումից և որից էլ բխում է բյուջի կատարողականը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ այդ հարցը կբարձրացնի մանկավարժական խորհրդի մոտակա նիստում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2018 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:
2. Քոլեջի 2019 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը երաշխավորել և ներկայացնել Քոլեջի Ընդհանուր ժողովի հաստատմանը:
3. Հանձնարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին Տնօրինական խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել ուսման վարձերի հավաքագրման վերաբերալ տեղեկատվություն:

3. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում հանգամանորեն ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ամբողջովին նոր մշակված 2019-2024 թվականների Ռազմավարական զարգացման ծրագրի նախագիծը (նախագիծը կցվում է): Ելույթում նշեց, որ նոր ՌԶԾ-ը իր մեջ ներառում է հստակ ձևակերպված նպատակներ, խնդիրներ, գործողությունների իրականացման քայլեր և իրատեսական գնահատման արդյունարար ցուցիչներ: Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը նշեց նաև, որ ուսումնասիրվել են Հայաստանի ինչպես քոլեջների, անպես էլ բուհերի ՌԶԾ-ի կառուցվածքները և պահանջները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող՝ Լ.Յարիջանյանը իր ելույթում նշեց, որ իրոք, ՌԶԾ-ի այս տարբերակը շատ պարզ և հստակ սահմանում է Քոլեջի ռազմավարական նպատակները և խնդիրները: Ձևաչափը ավելի պարզ և ընկալելի է ինչպես ուսանողների, դասախոսների, այնպես էլ արտաքին շահակիցների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի նախագիծը երաշխավորել և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Ք.Երևան **13.05.2019թ.**

2019թ. մայիսի 13-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Մ.Նանյանը, Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը և Լ.Յարիջանյանը (ուսանող):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական և հանրակրթական պետական փոխադրական քննությունների կազմակերպման աշխատանքների մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. 2019-2020 ուստարվա ընդունելության աշխատանքների նախապատրաստական աշխատանքների մասին:

   (Զեկուցող, Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի 2016-2019 թվականների կատարողականի մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

4. Քոլեջում գործող ներքին նորմատիվ իրավական ակտերի վերանայման և նորերի մշակման աշխաանքային խումբի կատարողականի մասին:

   (Զեկուցող, Որակի ապահովման պատասխանատու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական և հանրակրթական պետական փոխադրական քննությունների կազմակերպման աշխատանքների վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի նիստի բոլոր մասնակիցներին Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ ժամանակին մասնագիտական ամբիոններում քննարկվել են պետական ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը և քննական տոմսերը, ինչպես նաև հանրակրթության պետական փոխադրական քննությունների թեստերը, որոնց վրա աշխատել են համապատասխան ամբիոնների դասախոսները: Բոլոր աշխատանքները ըստ քայլերի քննարկվել են և տրվել համապատասխան երաշխավորում մասնագետների կողմից: Քննական տոմսերում ներառված հարցերը փոփոխության չեն ենթարկվել:

Վերանայվել են հանրակրթական քննական առարկաներից պետական փոխադրական քննություններ ընդունող հանձնաժողովների կազմերը, որոնք կներկայացվեն հաստատման:

Շարունակելով ելույթը Ն.Եգորյանը ներկայացրեց նաև պետական որակավորող հանձնաժողովների նախագահների թեկնածուներին, ըստ մասնագիտությունների՝ «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ», որոնք պետք է ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարություն հաստատման, ինչպես նաև ներկայացրեց «Քույրական գործ» մասնագիտության պետական որակավորող հանձնաժողովի նախագահի թեկնածուին:

Քննություններից առաջ նախատեսվում են կազմակերպել խորհրդատվական աշխատանքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- ՈՒսումնական մասի վարիչը իր ելույթում հավելեց, որ ուսանողներին համաձայն գործող կարգի, ժամանակին տրամադրվել են բոլոր հարցաշարերը և բոլոր քննությունների ժամանակացույցը:
- Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանն առաջարկեց Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին ներկայացնել ուսանողների հաճախումների և առաջադիմության վերաբերյալ տեղեկատվություն մինչև պետական ամփոփիչ ատեստավորման և փոխադրական քննությունների մեկնարկը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ուսումնական մասի կողմից իրականացված 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական և հանրակրթական պետական փոխադրական քննությունների կազմակերպման աշխատանքները գնահատել բավարար:
2. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին քննություններից առաջ տնօրենին ներկայացնել ուսանողների հաճախումների և առաջադիմության վերաբերյալ տեղեկատվություն:

2. **Լսեցին՝** Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյանի ելույթը 2019-2020 ուստարվա ընդունելության ընդունելության աշխատանքների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Ն.Սահակյանն իր ելույթում ներկայացրեց 2019-2020 ուստարվա դիմորդների ընդունելության մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման նպատակով իրականացված աշխատանքները: Դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին ընդգրկվել են 15 դասախոսներ, որոնք այցելել են ք. Երևանի և շրջանների հանրակրթական դպրոցներ: Մանրամասն տեղեկատվությամբ բուկլետներ և թերթիկներ են պատրաստվել Քոլեջի գործունեության վերաբերյալ, որոնք տրամադրվել են թվով 15 դպրոցների աշակերտներին: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է քոլեջի առօրյան, մասնագիտությունները, ուսումնական գործունեությունը, ձեռքբերումները հետագա ուսումնառության հնարավորությունները բուհերում ուսումնառելու վերաբերյալ, աշխատանքի տեղավորելու հնարավորությունները և այլն: Իրականցվել է գովազդի տեղադրում Facebook սոցիալական ցանցում, ինչպես նաև համացանցում առաջատար տեղեկատվական կայքերում:

Ամփոփելով ելույթը Ն.Սահակյանը առաջարկեց միջոցներ հատկացնել Քոլեջի կայքը կամ վերագործարկելու, կամ էլ նոր կայք ստեղծելու ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը, ուսումնական մասի վարիչ Լ. Հարությունյանը, կադրերի բաժնի վարիչ Ա. Գյոզալյանը իրենց ելույթներում դրական գնահատեցին Ն.Սահակյանի կողմից իրականացված դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ կատարված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2019-2020 ուստարվա ընդունելության նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:
2. 2019-2020 ուստարվա Տնօրինական խորհրդի անդրանիկ նիստում ներկայացնել նախապատրաստական աշխատանքների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն:

3. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի 2016-2019 թվականների կատարողականի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025թթ. Ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված երեք տարվա գործողությունների կատարողականը: Նա անդրադարձավ ՌԶԾ-ով սահմանված 20 ռազմավարական նպատակների իրականացման խնդիրների կատարմանն ուղղված

քոլեջում որակյալ կրթության ապահովմանը, արդիական ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը:

Քոլեջի 2016-2019 թվականների ամբողջական գործողությունները կազմակերպվել և իրականացվել են 2016-2025թթ. Ռազմավարական Զարգացման ծրագրով նախատեսված նպատակներին ու խնդիրներին համապատասխան: Այն ամբողջովին տնօրինության և ստորաբաժանումների անմիջական ուշադրության կենտրոնում է եղել:

Հաշվետու ժամանակահատվածում պարզվել է այն, որ քոլեջի ստորաբաժանումները դեռ չունեն գործող ռազմավարական զարգացման ծրագրից բխող իրենց զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորումը: Գործող ՌԶԾ-ում ներառված չեն ըստ նպատակների առաջադրված խնդիրների գործողությունները և դրանց վերջնարդյունքները: Ամփոփելով Քոլեջի 2016-2025թթ. ՌԶԾ-ի 2016-2017, 2017-2018 և 2018-2019 ուստարիների գործունեությունը՝ կարելի է փաստել, որ Քոլեջը հիմնականում իրականացրել է պլանավորված խնդիրները, մասնավորապես ուսումնական գործընթացների ուղղությամբ: Վերհանվել են խնդիրներ, որոնք իրականացվել են մասնակի կամ դեռ իրականացման փուլում են՝ ներքին և արտաքին մի շարք գործոնների պատճառով:

ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանը, ամփոփելով ելույթը, մասնակիցների ուշադրությանը ներկայացրեց կատարողական զեկույցի հիման վրա վերհանված մի շարք առաջարկություններ (կատարողական զեկույցը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի կատարողական զեկույցը ընդունել ի գիտություն և գնահատել բավարար:
2. Հանձնարարել տնօրինական խորհրդի անդամներին եռամսյա ժամկետում մշակել և տնօրինական խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել 2019-2024թթ. ՌԶԾ-ի գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցի նախագիծը:

4. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում գործող ներքին նորմատիվ իրավական ակտերի վերանայման և նորերի մշակման աշխատանքային խմբի կատարողականի վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում հանգամանորեն ներկայացրեց Տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքները՝ ըստ փուլերի: Առաջին փուլում ուսումնասիրվել են «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում գործարկվող բոլոր ներքին նորմատիվ իրավական փաստաթղթերը: Երկրորդ փուլում մշակվել են մի շարք փաստաթղթերի նախագծեր (ցուցակը կցվում է): Բոլոր վերանայված և նոր մշակված փաստաթղթերի նախագծերը քննարկվել են համապատասխան ստորաբաժանումներում և ուսանողական խորհրդում: Քննարկումների և առաջարկությունների հիման վրա բոլոր նախագծերը խմբագրվել են և բերվել վերջնական տեսքի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող Լ.Յարիջանյանն իր ելույթում նշեց, որ իրոք, նոր մշակված փաստաթղթերը շատ օգտակար կլինեն ուսանողների համար, մասնավորապես՝ «Ուսանողի ուղեցույցը», «Գիտելիքների գնահատման և բողոքարկման», «Առարկայական պարտքերի մարման» և «Պրակտիկայի կազմակերպման» կարգերը: Ամփոփելով ելույթը՝ Լ.Յարիջանյանը հավելեց, որ իրոք աշխատանքային խմբի կողմից շատ մեծ աշխատանք է իրականացվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և գնահատել բավարար:
2. Հանձնարարել Կադրերի բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին պատրաստել վերանայված և նոր մշակված փաստաթղթերի փաթեթը և ներկայացնել Տնօրինական խորհրդի հաստատմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

Ք.Երևան **24.06.2019թ.**

2019թ. հունիսի 24-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ ընդլայնված նիստ՝ տնօրինական խորհրդի բոլոր անդամների մասնակցությամբ, նախագահ՝ Ի.Վարդանյան, քարտուղար՝ Լ.Հարությունյան, անդամներ՝ Մ.Նանյան, Ն.Եգորյան, Ա.Գյոզալյան, Ն.Սահակյան և Լ.Յարիջանյան (ուսանող): Նիստին հրավիրված էին ամբիոնի վարիչները:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը, բացելով նիստը, ներկայացրեց օրակարգը.

1. 2018-2019 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. 2018-2019 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին հաջորդ կուրս փոխադրելու մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգի ժամանակացույցին համապատասխան մասնագիտական ամբիոններում քննարկվել են պետական ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը և քննական տոմսերը: Անհրաժեշտ աշխատանքներում ներգրավված են եղել բոլոր մասնագիտական ամբիոնների դասախոսները և նրանց կողմից տրվել է համապատասխան երաշխավորումներ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի համապատասխան հրամաններով նշանակվել են «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2018-2019 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով շրջանավարտների ըստ մասնագիտությունների պետական որակավորող հանձնաժողովի նախագահներ.

1. *0916.01.5 «Դեղագործություն» նախագահ՝ Կ.Սարգսյան (04.06.2019թ. Հրաման № Ը-28):*
2. *0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» նախագահ՝ Ա.Մանուկյան (04.06.2019թ. Հրաման № Ը-29):*
3. *0913.02.5 «Քույրական գործ» նախագահ՝ Վ.Հակոբյան (04.06.2019թ. Հրաման № Ը-30):*

Եզրափակելով ելույթը Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում (հաշվետվությունները կցվում են):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյանին ուսումնասիրել հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և հաջորդ ուստարվա ընթացքում իրականացնել բարելավման միջոցառումներ:

2. Լսեցին. Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու վերաբերյալ:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանը իր ելույթում ներկայացրեց 2018-2019 ուստարվա ուսումնական պլանները կատարած, ստուգարքներն ու քննությունները հանձնած միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով սովորող «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ» և «Քույրական գործ» մասնագիտություններով ուսումնառողների ցանկը: Հանգամանորեն ներկայացրեց ստուգարքներից և քննություններից ըստ մասնագիտությունների դրական գնահատական ստացած ուսանողների ցուցակները:

Եզրափակելով ելույթը Ն.Եգորյանը առաջարկեց ցուցակներում ներառված ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս: Փոխադրվողների ցանկում ներառված են նաև պայմանական փոխադրված ուսանոնղեր, որոնք ունեն առարկայական պարտքեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Ցուցակում ներառված ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս, համապատասխանաբար:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան